ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/10Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մայիսի 16-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/10Հ պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կատարողի կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացրած գրությունը և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած առաջարկությունը:
Փոփոխության նկարագրություն	ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված NՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/10Հ պայմանագրի կատարման համար կանխավճարի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում	N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/10Հ պայմանագրի 7.3 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

16.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/10Հ ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան 19 .12.2018 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Է. Քոչարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 16.05.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/10Հ գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 08.02.2018թ. կնքված N 2 համաձայնագրի 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<1.3 Պայմանագրի՝ 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև **180 000 (մեկ հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամի չափով՝ Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012573 ՀՎՀՀ 02565827	<<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ ք. Վանաձոր, Գր. Լուսավորիչ փ. Ց-6 6-5 <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ Վանաձոր մասնաճյուղ Հ/Հ 16036026535100 ՀՎՀՀ 06933586
Գլխավոր քարտուղար _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ _____ Է. Քոչարյան (ստորագրություն) Կ.Տ.